# ՀՀ կրթությունը և մշակույթը

### Կրթական գործի կազմակերպումը

Հայաստանի Հանրապետության հռչակումը նոր շրջան բացեց հայ դպրոցի պատմության մեջ: Անկախ պետականության ստեղծման պայմաններում մատաղ սերնդի կրթությունն ու դաստիարակությունը առաջնային նշանակություն էին ստանում, քանի որ ազգային պետական շինարարության իրականացման համար անհրաժեշտ էին գրագետ և բանիմաց կադրեր, որոնց պատրաստման հիմնաքարը ազգային նոր դպրոցն էր լինելու:

Կրթական բնագավառում օրենսդրական ակտեր մշակելու նպատակով Հայաստանի խորհրդում ստեղծվել էր նաև դպրոցական հանձնաժողով, որի նախագահն էր մանկավարժ Ս. Տիգրանյանը (ՀՅԴ անդամ)[195]: Հանձնաժողովը մեծ աշխատանք կատարեց կրթական համակարգը կազմակերպելու համար: 1918 թ. օգոստոսի վերջին հանձնաժողովը մշակեց և խորհրդի քննարկմանը ներկայացրեց «Դպրոցի կառավարման մասին» օրինագիծը, որն ընդունվեց սեպտեմբերի 11-ին: Օրենքում նշվում էր.

«1. Դպրոցը Հայաստանի Հանրապետության մեջ պետության մենաշնորհ չէ: Յուրաքանչյուր հասարակական կամ համայնական կազմակերպություն, խմբակցություն, ընկերակցություն, ինչպես և առանձին անհատ, իրավունք ունեն անարգել դպրոց բանալու և անկախորեն վարելու սեփական միջոցներով:

2. Պետական գանձարանի նպաստատվությունը չպետք է նկատվի որպես հիմք և նշան դպրոցները պետական կամ կառավարական համարելու կամ դարձնելու:

3. Մերժելի է դպրոցի պետականացման կարգը, և գերադասելի է ազատ դպրոցական սիստեմը»[196]:

Օրենքի ընդունումով Հանրապետության տարածքում գործող նախկին պետական, եկեղեցական–ծխական և այլ տիպի դպրոցներն ազատ գործելու հնարավորություն ստացան, սկիզբ դրվեց դպրոցների կառավարման հասարակական սկզբունքին:

1918 թ. նոյեմբերի սկզբին կոալիցիոն կառավարության կազմում հանրային կրթության նախարարի պաշտոնը տրվեց ժողովրդականներին: 1918 թ. դեկտեմբերից մինչև 1919 թ. հունիսը այս պաշտոնը վարեց ՀԺԿ գործիչ Գ. Մելիք–Ղարագյոզյանը: Մեծ է

[195] Տես ՀԱԱ, ֆ.198, ց. 1, գ. 15, թ. 16:
[196] Նույն տեղում, ֆ. 200, ց. 1, գ. 86, թ. 4:



նրա դերը մշակութային կյանքի կազմակերպման, կրթական բնագավառի աշխատանքների կարգավորման գործում: Կրթական հարցերում երկու կուսակցությունների դիրքորոշումները համընկնում էին. կրթությունը պետք է լիներ աշխարհիկ, գործելու էր դպրոցի կառավարման հասարակական սկզբունքը:

Հանրային կրթության նախարարությունը Հանրապետության տարածքը բաժանել էր երկու շրջանային տեսչությունների, որոնցից առաջինն ընդգրկում էր Երևանի, Էջմիածնի, Ալեքսանդրապոլի, Փամբակ–Լոռու, իսկ երկրորդը՝ Նոր Բայազետի, Սաղկաձորի, Դարալագյազի և Դիլիջանի գավառները: Առաջինի տեսուչ էր նշանակվել Ա. Շավարշյանը, իսկ երկրորդինը՝ Գյուտ ծ. վարդապետը[197]: Հետագայում շրջանային տեսչությունների թվաքանակը հասցվեց ութի: Շրջանային տեսուչների վրա էին դրված տեղերում դպրոցական բնականոն կյանքի կազմակերպումը և ուսումնական գործընթացի վերահսկումը:

Արդեն 1918 թ. աշնանը դպրոցական կյանքը Հանրապետությունում աստիճանաբար կարգավորվում էր: Դպրոցների մի մասում սկսվել էին դասընթացները:

Սակայն տարվա վերջերին ստեղծված սոցիալ–տնտեսական ծանր դրությունը կառավարությանը հարկադրում է դիմել արտակարգ միջոցառումների: Նախատեսվում էր դպրոցական շենքերի բռնագրավումը գաղթականության կարիքների համար: Լայն տարածում ստացած վարակիչ համաճարակային հիվանդությունները և սովը ազդում էին կրթական հիմնարկների նորմալ գործընթացի վրա: Ուստի որոշվում է ընդհատել դպրոցական պարապմունքները մինչև հունվարի վերջը, իսկ ուսումնական երկրորդ կիսամյակի տևողությունը երկարաձգել: 1919 թ. մարտից կրթական հիմնարկները վերսկսում են իրենց գործունեությունը: Դպրոցների բացման գործում մեծ էր մանկավարժների դերը: Չնայած առկա դժվարություններին՝ ուսումնական տարին գրեթե բոլոր դպրոցներում ավարտվեց հունիսի վերջերին:

1918/1919 ուսումնական տարում Հանրապետությունում գործել են 133 տարրական դպրոց՝ 11 136 աշակերտով և 313 ուսուցչով, 10 միջնակարգ դպրոց՝ 3 137 աշակերտով և 177 ուսուցչով[198]: Բերված տվյալները ցույց են տալիս, որ դպրոցական ցանցը բավական կրճատվել էր, սակայն, հաշվի առնելով այն մղձավանջային իրավիճակը, որում գտնվում էր Հանրապետությունը, կատարվել էր հսկայական աշխատանք դպրոցները պահպանելու համար:

Երկրի տնտեսության կայունացման հետ մեկտեղ կրթական գործի նկատմամբ հասարակական հետաքրքրությունը գնալով աճում էր: Անկախ պետականության պայմաններում կառավարությունը ստանձնում էր հոգատարությունը ազգային դպրոցի հանդեպ: Դրա մասին է վկայում այն փաստը, որ մանկավարժները և աշակերտությունը ակտիվորեն մասնակցեցին Հայաստանի Հանրապետության առաջին տարեդարձի տոնակատարությանը: Կառավարության որոշմամբ՝ Հանրապետության առաջին տարին նշելու կապակցությամբ ստեղծվել էր պետական հանձնաժողով կրթության նախարար Գ. Մելիք–Ղարագյոզյանի գլխավորությամբ: Հանձնաժողովը նախապատրաստական աշխատանք կատարեց տոնակատարությունը պատշաճ մակարդակով նշելու համար: Հանրային կրթության նախարարի հրամանով Հանրապետության բոլոր դպրոցներում, ի հիշատակ անկախության համար զոհված մարտիկների, կատարվելու էր հոգեհանգիստ, կարդացվելու էին ազատագրական պայքարին և Հանրապետության տարեդարձին նվիրված զեկուցումներ: Աշակերտությունը և ուսուցչությունը մեծ խանդավառությամբ մասնակցեցին Երևանում կազմակերպված շքերթին և տարբեր միջոցառումների[199]:

[197] Տես նույն տեղում, ֆ. 207, ց. 1, գ. 3, թ. 307:
[198] Տես նույն տեղում, գ. 336, թ. 33–37:
[199] Տես նույն տեղում, ֆ. 198, ց. 1, գ. 27, թ. 10:

1919 թ. օգոստոսի 10–ին Հանրային կրթության և արվեստի նախարարի պաշտոնում նշանակվում է հայ ականավոր գրականագետ և մանկավարժ Նիկոլ Աղբալյանը։ Հայ մտավորականությունը ջերմորեն ընդունեց և հավանություն տվեց այդ որոշմանը։ Ն. Աղբալյանը արգասաբեր գործունեություն ծավալեց կրթական գործի հետագա կազմակերպման ու զարգացման ուղղությամբ։ Դպրոցների բացման գործում հատկապես մեծ է հայ մանկավարժության նշանավոր դեմքերից մեկի՝ Գուրգեն Էդիլյանի ավանդը։

Արդեն 1919 թ. վերջերին հանրապետությունում գործում էր դպրոցական կայուն ցանց, որը գնալով ընդլայնվում էր՝ ներառելով նորանոր բնակավայրեր։ Ըստ վիճակագրական տվյալների՝ 1919–1920 ուսումնական տարում հանրապետության գավառներում տարրական դպրոցական ցանցը հետևյալ պատկերն էր ներկայացնում. 456 դպրոց՝ 40 188 աշակերտով և 1047 ուսուցչով։ Զգալի աշխատանք էր կատարվել միջնակարգ դպրոցների կազմակերպման ուղղությամբ։ 1919–1920 ուս. տարում գործում էր 20 միջնակարգ դպրոց՝ 5063 աշակերտով և 286 ուսուցչով։ Միջնակարգ էին դարձել Պուշկինյան, Նոր Բայազետի, Աշտարակի բարձր տարրական դպրոցներն ու Ալեքսանդրապոլի Ս. Փրկիչ եկեղեցական–ծխական դպրոցը։ Նոր էին բացվել Երևանի ուսուցչական սեմինարիայի խառը պրոգիմնազիան, Վաղարշապատի, Ղարաքիլիսայի և Իջևանի գիմնազիաները[200]։

Հանրապետության կառավարությունը ուշադրություն էր հատկացնում նաև ազգային փոքրամասնությունների դպրոցների բացմանը։ Վերաբացվում են ռուսական, ադրբեջանական և հունական դպրոցները տարբեր գավառներում՝ Երևանում, Կարսում, Լոռի–Փամբակում և այլուր։ Այսպիսի դպրոցների մեծ մասը պահվում էր պետական միջոցների հաշվին։ Նախատեսվում էր բացել դպրոցներ նաև ասորական և քրդական համայնքների համար։

Նախարարների խորհուրդը պետական սուղ միջոցներից հատկացումներ կատարեց դպրոցաշինարարությանը։ Հանրային կրթության նախարարությունը շրջանային տեսչություններին տրամադրում էր վարկ՝ շենքերի վերանորոգման, դպրոցական կահույքի ու գրենական պիտույքների ձեռքբերման համար։ Դպրոցաշինարարությունը շարունակում էր հետ մնալ օբյեկտիվ պատճառներով։ Միջնակարգ 20 դպրոցից միայն 5–ի շենքն էր սեփական, իսկ մնացածը տեղավորված էին վարձու շենքերում[201]։ Նման իրավիճակում էին տարրական դպրոցները։ Երևանի գավառի 50 դպրոցից միայն 23–ն ունեին սեփական շենք։ Սեփական դպրոցներով ամենամեծ ցուցանիշը Ղամարլուի (Արտաշատ) շրջանն ուներ, քանի որ դեռևս ցարական իշխանության կողմից այդտեղ կառուցվել էր մի քանի պետական դպրոցական շենք[202]։

1919 թ. հունիսին կառավարության որոշմամբ 500 հազար ռուբլի է հատկացվում դասագրքերի հրատարակման համար։ Տպագրվում են «Դասընկեր» (կազմողներ՝ Տ. Ռաշմաճյան, Ա. Խաչակյան, Ս. Զիլինգարյան) և «Փայլուն արև» (Գ. Էդիլյան) դասագրքերը։ Հրատարակության էր նախապատրաստվել «Հայոց պատմություն» (Ս. Թորոսյան), «Ռուսահայ գրականության պատմություն» (Լ. Մանվելյան), քրդերեն այբբենարան (Հակոբ Ղազարյան՝ Լազո) և այլ դասագրքեր[203]։

Հասարակությունն առանձնահատուկ հոգատարություն էր դրսևորում չքավոր աշակերտության նկատմամբ։ Կատարվում էին հանգանակություններ ու նվիրատվություններ՝ հօգուտ չքավոր աշակերտության, ինչի նպատակով կազմակերպվում էին զանազան միջոցառումներ (երեկույթներ, ներկայացումներ)։ 1920 թ. մայիսին 350 հա-

[200] Տե՛ս նույն տեղում, գ. 237, թ. 35, 156։
[201] Տե՛ս նույն տեղում, գ. 349, թ. 3։
[202] Տե՛ս նույն տեղում, գ. 265, թ. 7։
[203] Տե՛ս Յառաջ, 20 սեպտեմբերի, 1919։



զար ռուբլի տրամադրվեց 5 հազար չքավոր աշակերտներին գրենական պիտույքներով ապահովելու համար[204]։

Պետությունը լուրջ ուշադրություն էր նվիրում դպրոցների ազգայնացման խնդրին։ 1920–1921 ուսումնական տարում պետք է ավարտվեր տարրական դպրոցների ազգայնացումը, վերացվեին նախկին ռուսական և հայկական ծխական ու թեմական դպրոցների միջև եղած տարբերությունները։ Ազգային կրթական համակարգի ստեղծման ճանապարհին մեծ նշանակություն ունեին հայերենը որպես պետական լեզու ճանաչելու ուղղությամբ ձեռնարկված միջոցառումները, ինչպես նաև բնակչության կրթության գործի կազմակերպման համար կատարված աշխատանքը։ 1919 թ. դեկտեմբերի 26–ին խորհրդարանն ընդունում է պատմական կարևոր որոշում. «Օրենք պետական լեզվի մասին»[205] իրականացնելով հայ ժողովրդի դարավոր երազանքներից մեկը՝ մայրենի լեզուն պաշտոնապես ճանաչելով որպես պետական լեզու։ Աշխատանքներ ծավալվեցին մեծահասակ բնակչության կրթական մակարդակի բարձրացման ուղղությամբ։ 1920 թ. հունվարի 5–ին խորհրդարանն ընդունեց օրենք գրավարժական դասընթացների և ժողովրդական համալսարանների կազմակերպման մասին։ Նույն թվականի մարտին ընդունված օրենքով եկեղեցական–ծխական դպրոցները պետականացվեցին։ Աշխատանքներ էին կատարվում դպրոցների ուսումնադաստիարակչական գործընթացի կարգավորման ուղղությամբ։ Նախատեսվում էր ընդունել նոր դպրոցական կանոնադրություն և ուսումնական ծրագրեր, աստիճանաբար անցում կատարել պարտադիր ուսուցմանը, ստեղծել աշխատանքային դպրոց։

Աստիճանաբար դրվում էին աշակերտության մարմնակրթական դաստիարակության հիմքերը, 1919 թ. հուլիսի սկզբին Երևանի արական գիմնազիայի մանկավարժների և աշակերտների նախաձեռնությամբ տեղի է ունենում Հայաստանի մարմնամարզական միության ժողովը, որը հիմնադրում է հայ հեթանոսական աստծու անունը կրող «Վահագն» սկաուտական ակումբը։ 1920 թ. օգոստոսին Կ. Պոլսից Հայաստան են ժամանում սկաուտական գործիչներ Վահան Չերազը, Օնիկ Յազմաճյանը, Տիգրան Խոյանը, ովքեր ակտիվ աշխատանք են կատարում Ալեքսանդրապոլում, Նոր Բայազետում, Լոռի–Փամբակում սկաուտական շարժման խմբակների ստեղծման ուղղությամբ[206]։

Անապահով վիճակում էին գտնվում հայկական դպրոցները նաև հարևան հանրապետություններում՝ Վրաստանում և Ադրբեջանում։ Օգնություն կազմակերպվեց նրանց պահպանության ու գործունեության համար։ Միայն Վրաստանում գործում էր 80 հայկական դպրոց։

Հանրային կրթության նախարարությունը մի շարք գործնական քայլեր ձեռնարկեց դպրոցները մանկավարժական կադրերով համալրելու ուղղությամբ։ Ուսուցիչներ պատրաստելու նպատակով 1919 թ. սեպտեմբերին բացվում է ուսուցչական սեմինարիա, որի վերատեսուչն էր փիլիսոփայության դոկտոր Ա. Տեր–Պողոսյանը։ Բացի այդ, 1919 թ. աշնանը Երևանում, Ալեքսանդրապոլում, Նոր Բայազետում կազմակերպվում են կարճատև մանկավարժական դասընթացներ։ Այդ ձեռնարկումների շնորհիվ 1919–1920 ուսումնական տարվա ընթացքում նկատելիորեն ավելանում է մանկավարժների թվաքանակը, չնայած զգացվում էր նրանց պակասը հատկապես տարրական դպրոցի համար։ Հանրապետության կառավարությունը որոշ քայլեր է ձեռնարկում ուսուցիչների նյութական դրության բարելավման ուղղությամբ։ Մանկավարժների աշխատավարձը թեև բարձրացվում է երկու անգամ, հատկացվում է պարենամթերք և այլն, սակայն սոցիալական դրությունը շարունակում էր ծանր մնալ։

[204] Տե՛ս ՅԱԱ, ֆ. 199, ց. 1, գ. 156, թ. 14։
[205] Տե՛ս նույն տեղում, ֆ. 200, ց. 1, գ. 86, թ. 83։
[206] Տե՛ս Մարզիկ, 1991, հ. 3–4, էջ 5։

Հայ մանկավարժներն իրենց ներդրումն ունեցան ազգային պետականության կա-
ռուցման գործում: Ինչպես նախկինում, այնպես էլ Հանրապետության օրոք, հատկապես
գյուղում, նրանք էին մնում ժողովրդի առաջին խորհրդատուն ու շահերի արտահայտո-
ղը: Ուսուցչությունն ակտիվորեն մասնակցում էր նաև երկրի հասարակական–քաղա-
քական կյանքին:

* * *

Ազգային անկախ պետական շինարարության գործընթացի իրականացման համար
անհրաժեշտ էին բարձր որակավորում ունեցող մասնագիտական կադրեր: Սակայն հան-
րապետության սակավաթիվ մտավորականության մեջ քիչ էին բարձրագույն և միջնա-
կարգ կրթություն ունեցող մասնագետները: Հանրապետության նախարարություննե-
րում և տարբեր գերատեսչություններում աշխատող պաշտոնյաների մեծ մասը չուներ
համապատասխան մասնագիտական կրթություն: Առանձնապես սուր էր զգացվում
բժիշկների, գյուղատնտեսների, ճարտարագետների պակասը:
Օրախնդիր հարց էր դարձել որակյալ մասնագետների պատրաստումը: Առաջնա-
հերթ էր բարձրագույն և միջնակարգ մասնագիտական կրթական հաստատությունների
ստեղծումը:
1919 թ. մայիսի 16–ին կառավարությունը հավանություն տվեց հանրային կրթու-
թյան նախարարի ներկայացրած օրինագծին պետական համալսարանի հիմնադրման մա-
սին: Օրենքում նշված էր.
«1. Հիմնել Երևանում համալսարան հետևյալ բաժիններով՝ ա) պատմալեզվաբանա-
կան, բ) տնտեսաիրավաբանական, գ) բժշկական և դ) ֆիզիկամաթեմատիկական՝ տեխնի-
կական ստորաբաժանումով:
2. Համալսարանը բանալ 1919–1920 ճեմարանական տարում:
3. Առաջին հերթին բանալ պատմալեզվաբանական բաժինը:
4. Մնացած բաժինները բանալու ժամանակը և հերթը սահմանում է մինիստրների
խորհուրդը՝ ըստ հանրային կրթության մինիստրի առաջարկության:
5. Համալսարանը բանալու նախնական ծախսերը հոգալու համար հատկացնել երեք
հարյուր հազար ռուբլի (300 000 ռ.)՝ հանձնարարելով ֆինանսների մինիստրությանը
բանալ համապատասխան վարկ հանրային կրթության մինիստրությանը»[207]:
Հայաստանի կառավարության պատմական որոշումը ջերմորեն ընդունվեց համայն
հայության կողմից: Համալսարանի հիմնադրման մասին տեղեկացվեցին արտերկրում
գտնվող հայկական դիվանագիտական ներկայացուցչությունները, որոնք պետք է աշ-
խատանք ծավալեին հայության շրջանում համալսարանի կարիքները հոգալու ուղղու-
թյամբ: Առանձնապես կազմակերպչական մեծ աշխատանք կատարեց Թիֆլիսի հայ մտա-
վորականությունը: Արդեն 1919 թ. հունիսին Թիֆլիսում ստեղծվել էր համալսարանա-
կան ընդհանուր հանձնաժողով, որի կազմում ընդգրկվել էին ականավոր գիտնականներ
Յու. Ղամբարյանը, Մ. Բունիաթյանը, Դ. Զավրյանը, Մ. Աբեղյանը, Գարեգին եպիսկո-
պոս Հովսեփյանը և ուրիշներ: Կառավարության 1919 թ. հուլիսի 8–ի որոշմամբ համալ-
սարանի տեսուչ (ռեկտոր) նշանակվեց նշանավոր իրավագետ, պրոֆեսոր Յու. Ղամբար-
յանը, հաստատվեցին համալսարանի ժամանակավոր կանոնները[208]:
Համալսարանական հանձնաժողովը մեծ կազմակերպչական աշխատանք կատարեց:
Առաջիկա ուսումնական կիսամյակի համար ճշտվեց պատմալեզվաբանական ֆակուլտե-

207 Հայաստանի Հանրապետության պառլամենտի օրենքները (1918–1920 թթ.), վավ. 190, էջ 77:
208 Տե՛ս նույն տեղում, վավ. 325, էջ 130–131:



տի ուսումնական ծրագիրը, դասավանդվող առարկաների ցանկը և դասախոսական կազ-
մը: Դասախոսական աշխատանքի էին հրավիրվել հիմնականում երիտասարդ, գիտական
ներուժ ունեցող կադրեր, որոնք ուսանել էին Ռուսաստանի և Արևմտյան Եվրոպայի
առաջնակարգ համալսարաններում՝ ուսանել աշխարհահռչակ գիտնականների մոտ:
Պատմալեզվաբանական ֆակուլտետի դասախոսներ նշանակվեցին գրականագետ
Մանուկ Աբեղյանը, հնագետ Աշխարհբեկ Մելիք–Քալանթարը, լեզվաբաններ Ռուբեն
Աբրահամյանը և Ստեփան Մալխասյանը, հայ հոգևորականության ներկայացուցիչներ՝
հայ գրականության մագիստրոս Մեսրոպ եպիսկոպոս Տեր–Մովսիսյանը, փիլիսոփայու-
թյան դոկտոր Գարեգին եպիսկոպոս Հովսեփյանը:
1920 թ. հունվարի 31–ին Ալեքսանդրապոլի Առևտրական դպրոցում մեծ հանդիսա-
վորությամբ բացվեց համալսարանը: Բացման արարողությանը ներկա էին պետական,
հասարակական գործիչներ, դիվանագետներ, դասախոսական կազմը և հասարակայնու-
թյան ներկայացուցիչներ: Հանդեսը բացեց համալսարանի տեսուչ Յու. Ղամբարյանը,
որից հետո ընդարձակ ճառով ելույթ ունեցավ հանրային կրթության նախարար Ն. Աղ-
բալյանը: Նրա հուզումնալից խոսքը նվիրված էր հայ ժողովրդի հերոսական անցյալին
և ապագա երազանքներին՝ արժանավոր տեղ գրավել քաղաքակիրթ ազգերի շարքում:
Ելույթ են ունենում խորհրդարանի փոխնախագահ Ա. Սահակյանը, վարչապետ Ա. Խա-
տիսյանը, օտարերկրյա դիվանագետներ և ուրիշներ: Ընթերցվում է Գևորգ Ե կաթողի-
կոսի օրհնության կոնդակը: Ստացվել էին ողջույնի բազմաթիվ հեռագրեր, այդ թվում՝
Մեծ Բրիտանիայի արտաքին գործերի նախարար լորդ Քերզոնից, Վրաստանի հանրա-
յին կրթության նախարարության կողմից, Թիֆլիսի և Բաքվի համալսարանների և այլ
բուհերի ռեկտորներից, արտերկրի հայ հասարակական ու բարեգործական կազմակեր-
պություններից, անհատ քաղաքացիներից: Համալսարանի բացման կապակցությամբ
կատարվել էին նվիրատվություններ: Մայիլյան եղբայրները հատկացրել էին 1 միլիոն
ռուբլի և այլն[209]: Հրատարակվել էր միօրյա տոնական թերթ «Հայաստանի համալսա-
րան» անունով, որից ստացված եկամուտը հատկացվելու էր չքավոր ուսանողության
օգնության ֆոնդին: Նվիրատվությունները շարունակվեցին նաև հետագայում:
Առաջին կիսամյակում համալսարանի պատմալեզվաբանական ֆակուլտետում ուսա-
նում էին 261 ուսանող և ունկնդիր: Ֆակուլտետի առաջին դեկանն էր Էջմիածնի նախկին
մատենադարանապետ, հայ գրականության նշանավոր մասնագետ Մեսրոպ եպիսկոպոս
Տեր–Մովսիսյանը: Համալսարանը շարունակում էր համալրվել դասախոսներով՝ պատ-
մաբան Հակոբ Մանանդյան, տնտեսագետ Ա. Մանուկյան և ուրիշներ: 1920 թ. ամռանը
համալսարանի հանձնաժողովը դասախոսելու հրավերներ է ուղարկում աշխարհահռչակ
գիտնական հայագետներ՝ Բեռլինի, Կոպենհագենի և Ս. Պետերբուրգի համալսարանների
պրոֆեսորներ Յ. Մարքվարտին, Ն. Մառին:
Աստիճանաբար կարգավորվում է նաև համալսարանի նյութական–ֆինանսական
վիճակը: Համալսարանի բյուջեում պետական ֆինանսական հատկացումները կազմում
էին մոտ 70 տոկոս, նվիրատվություններինը՝ 26 տոկոս, և ուսումնավարձը՝ 4 տոկոս,
նվիրատվությունները կազմում էին 280 հազար ռուբլի, ինչպես նաև 20 794 ռուբլի
անգրկովկասյան և 10 հազար ռուբլի վրացական բոներով[210]: Խոշոր էր Մայիլյան եղբայր-
ների հատկացրած գումարը գրադարանի համար՝ 350 հազար ռուբլի[211]: Գրադարանին

209 Տե՛ս Երևանի համալսարան. 1918–1920 թթ. (վավերագրերի ժողովածու), Երևան, 1995, վավ. 103, էջ 158–164: Վրացեան Ս., Հայաստանի Հանրապետութիւն, էջ 362–363:
210 Տե՛ս Երևանի համալսարան. 1918–1920 թթ. (վավերագրերի ժողովածու), վավ. 133, էջ 199–203 (հաշվարկները՝ ըստ տեղեկագրում բերված թվական տվյալների):
211 Տե՛ս նույն տեղում, վավ. 130, էջ 196:

*գրքեր էին նվիրում դասախոսները, բարեգործական կազմակերպությունններն ու անհատ քաղաքացիները:*

*1920 թ. հոկտեմբերին պատմալեզվաբանական ֆակուլտետը տեղափոխվեց Երևան: Նախատեսվում էր բացել նաև իրավաբանական և բժշկական ֆակուլտետներ, սակայն քաղաքական իրադրության սրումը և Հանրապետության խորհրդայնացումը խոչընդոտեցին դրա իրականացմանը:*

**Աղբյուրը՝** *«Հայոց պատմություն. նորագույն ժամանակաշրջան (1918-1945)»*, հ. IV, գիրք I, խմբ. խորհուրդ՝ Վ. Բարխուդարյան և ուրիշ., ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտ, «Զանգակ-97» հրատ., Երևան, 2010, էջ 86-92: